թուլեան, վճիռն անխախտելի հատեալ ունին ըստ Օրինաց իւրեանց 'ի վերայ այնպիսի մանկ-տաց զի ամենայն մանկունք կատարելով գործս իւրեանց, դառնային և մտանէին 'ի տունս իւ-րեանց ուրախութեամբ և ընդունէին հրամէնք առաւօտեան, այլ նայ որ ոչ կարաց դասն իւր կատարել և հարկանել նշանին կալով մնայր 'ի դպրատանն 'ի դաշտի յոյժ տխրութեամբ և ա-մօթխածութեամբ և ջանալ պարտ էր աշխատանօք մինչև փոխանակ մի հարկանելոյ հարկանիցէր երկուս նշանին իւրոյ, ապա թոյլ տային նմայ դառնալ 'ի տուն իւր և առնուլ հրամէնք, և եթէ նայ ոչ հարկանէր նշանին պարտ էր նմայ կալ 'ի դաշտին մինչև վեց ժամ ժամանակաւ անսվաղ, եթէ որդի ռամկի և եթէ նշանաւորի, և այլ բա-զում իմաստութեամբ սահմանաւ և անխախտելի Օրինօք վարելով սոքայ ժամանակս իւրեանց մին-չև աշխարհ ամենայն ցանկացան մտանել 'ի պահ-պանութիւն նոցայ և լինիլ ժողովուրդ նոցայ. սովաւ բազմացան սոքայ և եղեն յազգ անուա-նեցին հռոմայեցիք և եղեն տէր աշխարհաց և գաւառաց, հաստատեցան 'ի գործս և արարին տուն ծերակուտի անուանեցին անուն տանն Կամ-պիթոլ, որում ամենայն հրման անտի ելանէր այսինքն 'ի տանէ ծերակուտից ըստ Օրինօք և գործ ածէր ձեռամբ պաշտօնատարի, որում պաշ-տօնն տային ծերակուտքն, և պաշտօնատարս թէ-